# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

### Այրում համայնքի ավագանի

# ՈՐՈՇՈՒՄ

*22 նոյեմբերի 2013 թիվ 30-Ն*

2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ հոդվածների համաձայն՝ Այրում համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ,
2) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
   ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ,
   բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ,
   գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ,
   դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ.
4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ տեղական տուրքը սահմանել 3000 դրամ.
3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 5000 դրամ:
4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝
   1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3750 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինություններ ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3750 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 150000 դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 30000 դրամ.

համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 3000 դրամ,

բ. ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 500 դրամ:

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր տարվա համար՝ 50000 դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ.
2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ.
3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200000.
4) խաղատների կազմակերպման համար՝ 500000 դրամ.
5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 500000 դրամ.
6) վիճակախաղերի կազմակերպման համար 100000 դրամ:

8. Համաքաղաքային կանոններին համապատասխան համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 0 դրամ:

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.
2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ.
3) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.
4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

10. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1000 դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50 000 դրամ:

11. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 10000 դրամ:

12. Սահմանել տեղական վճարի դրույքաչափերը՝

1) համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու ու հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ քաղաքապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 դրամ.

2) համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ քաղաքապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 դրամ.

3) քաղաքապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար՝ 5000 դրամ.
4) շինարարական և խոշոր եզրափակիչ աղբի հավաքման և փոխադրման համար քաղաքապետարանի կողմից տրամադրվող թույլտվության վճար՝ 2000 դրամ:

13. Ուժը կորցրած ճանաչել Այրում համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 8-ի «Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 25–Ն որոշումը:
14. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Ավագանու անդամներ

կողմ- 7 դեմ-0 ձեռնպահ-0

Հ. ԱՂԱԲԱԲՅԱՆ
Ա. ԱՍՏԻԿՅԱՆ
Մ. ԲԱՀԱԴՈՒՐՅԱՆ
Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ա. ՅԱՐԱԼՅԱՆ
Հ.ՍԻՐԱԴԵՂՅԱՆ
Մ.ՄԻՐԶՈՅԱՆ

Այրումի քաղաքապետ Գ. Եգանյան

2013թ. նոյեմբերի 22
ք. Այրում

*Գույքի վարձավճար*

## Պահածոյագործների թիվ 1 հանրակացարան

Վճար = 7 x 12 x ք.մ

| հ/հ | Ազգանուն Անուն | Տարածքը (ք.մ) |
|---|---|---|
| 1 | Ապրիկյան Սերգի | 10 |
| 2 | Ղազարյան Եղիշ | 60 |
| 3 | Պապյան Սուրեն | 10 |
| 4 | Սիրադեղյան Կառլեն | 26 |
| 5 | Չիլինգարյան Աղասի | 26 |
| 6 | Թումանյան Համլետ | 36 |
| 7 | Աբովյան Արսեն | 19 |
| 8 | Խաչատրյան Յաշա | 12 |
| 9 | Եգանյան Գառնիկ | 12 |
| 10 | Միսկարյան Օֆելյա | 10 |
| 11 | Պետրոսյան Դավիթ | 39 |
| 12 | Սարատիկյան Գանձափար | 56 |
| | Ընդամենը | 316 |

Վճար =316 x 7 x12 = 26544 դրամ

## Պահածոյագործների թիվ 2 հանրակացարան

Վճար = 7 x 12 x ք.մ

| հ/հ | Ազգանուն Անուն | Տարածքը (ք.մ) |
|---|---|---|
| 1 | Ղազարյան Վարդան | 31 |
| 2 | Խաչիկյան Սոս | 26 |
| 3 | Գաբոյան Սամադ | 28 |
| 4 | Միքայելյան Մելսիկ | 13 |
| 5 | Անտոնյան Համմիկ | 25 |
| 6 | Շաղբաթյան Քրիստինե | 25 |
| 7 | Դավթյան Անահիտ | 17 |
| 8 | Միրզոյան Սեյրան | 36 |
| 9 | Մարգարյան Հովիկ | 25 |
| 10 | Միսկարյան Աիդա | 14 |
| 11 | Խառատյան Վահրամ | 25 |
| 12 | Քառյան Լիդա | 13 |
| 13 | Բաղդասարյան Մարինե | 12 |
| 14 | Անտոնյան Ալվարդ | 36 |
| 15 | Մաթևոսյան Վանիկ | 13 |
| | Ընդամենը | 339 |

Վճար = 337 x 7 x12 = 28476 դրամ

## Աբովյան թիվ 5-ի 3-րդ հանրակացարան

Վճար = 7 x 12 x ք.մ

| հ/հ | Ազգանուն Անուն | Տարածքը (ք.մ) |
|---|---|---|
| 1 | Հակոբյան Համիկ | 18 |
| 2 | Մելիքյան Լիդա | 20 |
| 3 | Գորգինյան Գոհար | 28 |
| 4 | Մկրտումյան Անահիտ | 28 |
| 5 | Մակարյան Արմեն | 18 |
| 6 | Հարությունյան Սարգիս | 18 |
| 7 | Չերչինյան Մուշեղ | 28 |
| 8 | Անանյան Մարինե | 56 |
| 9 | Ճեկոյան Տաթևիկ | 28 |
| 10 | Սիմոնյան Սանասար | 18 |
| 11 | Ավագյան Սեդա | 18 |
| 12 | Վարդումյան Գագիկ | 28 |
| 13 | Օսիպյան Ռոշան | 44 |
| 14 | Օսիպյան Ծովինար | 28 |
| 15 | Բահադուրյան Արարատ | 62 |
| 16 | Բահադուրյան Միեր | 28 |
| 17 | Նասիբյան Անժիկ | 18 |
| 18 | Ղազինյան Դավիթ | 62 |
| 19 | Հովհաննիսյան Էդգար | 28 |
| | Ընդամենը | 576 |

Վճար = 604 x 7 x12 = 48384 դրամ

## Բարեկամության թիվ 26-ի 4-րդ հանրակացարան

Վճար = 7 x 12 x ք.մ

| հ/հ | Ազգանուն Անուն | Տարածքը (ք.մ) |
|---|---|---|
| 1 | Քոչարյան Ալբերտ | 20 |
| 2 | Մկրտչյան Սարգիս | 50 |
| 3 | Մակարյան Արամ | 34 |
| 4 | Բաղդասարյան Ռիմա | 28 |
| 5 | Աբազյան Արտակ | 20 |
| 6 | Հախվերդյան Անուշ | 28 |
| 7 | Պերեդրեյ Անահիտ | 20 |
| 8 | Հայրապետյան Հրաչուհի | 40 |
| 9 | Գաբոյան Գագիկ | 20 |
| 10 | Անանյան Սերյոժա | 40 |
| | Ընդամենը | 300 |

Վճար = 300 x 7 x12 = 25200 դրամ

# Չսեփականաշնորհված բնակարաններ

Վճար = 10 x 12 x ք.մ

| h/h | Ազգանուն Անուն | Տարածքը (ք.մ) |
|---|---|---|
| 1 | Աբովյան Ռաֆիկ | 42.2 |
| 2 | Ջանինյան Հայկուշ | 30.6 |
| 3 | Առաքելյան Զարիկ | 37.7 |
| 4 | Օսիպյան Գեորգի | 14.8 |
| 5 | Հարությունյան Հայկ | 25.7 |
| 6 | Անտոնյան Շուշիկ | 33.4 |
| 7 | Չերչինյան Համբարձում | 29.3 |
| 8 | Միրզոյան Արայիկ | 14.6 |
| 9 | Մուսայելյան Մարտիկ | 26.2 |
| 10 | Մարգարյան Էդիկ | 21.9 |
| 11 | Սարուխանյան Ռաշիդ | 25.2 |
| 12 | Հարությունյան Սևան | 56.2 |
| | Ընդամենը | 357.8 |

Վճար = 374.4 x 10 x12 = 42936 դրամ

Կատարող՝
Առաջատար մասնագետ
Ա. Ամիրաղյան

# Հասարակական և խառը կառուցապատման հողամասերի վարձավճարների չափը

| հ/հ | Ազգանուն Անուն | | Տարածքը (ք.մ) | Գումար (դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | Աղաբաբյան | Կարինե | 4 | 3840 |
| 2 | Ամիրաղյան | Միեր | 20 | 30000 |
| 3 | Անանյան | Վաչագան | 6 | 5760 |
| 4 | Ապրիկյան | Մարտիկ | 6 | 5760 |
| 5 | Բաղդասարյան | Մարինե | 11 | 10560 |
| 6 | Դալլաքյան | Գևորգ | 5 | 4800 |
| 7 | Կիրակոսյա | Միշա | 18 | 17280 |
| 8 | Խառատյան | Աղունիկ | 10 | 9600 |
| 9 | Հանիսյան | Էլմիրա | 6 | 5760 |
| 10 | Հանիսյան | Վահրամ | 5 | 4800 |
| 11 | Մամյան | Գագիկ | 20 | 12000 |
| | Յուզբաշյան | Աննա | 20 | 19200 |
| 12 | Յոլչինյան | Սեդա | 20 | 19200 |
| 13 | Միրզոյան | Մխիթար | 8.3 | 8000 |
| 14 | Նասիբյան | Ամալյա | 7 | 6720 |
| 15 | Նորեկյան | Բենիկ | 9 | 8640 |
| 16 | Ջանինյան | Վերգուշ | 4 | 3840 |
| 17 | Ջանինյան | Սուրեն | 6 | 5760 |
| 18 | Նորեկյան | Մասիս | 8 | 7680 |
| 19 | Սիմոնյան | Իրինա | 20 | 19200 |
| 20 | Սիմոնյան | Հրանուշ | 20 | 19200 |
| 21 | Սիրադեղյան | Սիրանուշ | 15 | 14400 |
| 22 | Սիրադեղյան | Սամվել | 5 | 4800 |
| 23 | Միքայելյան | Մելան | 20 | 19200 |
| 24 | Թամազյան | Վիլիկ | 12 | 11520 |
| 25 | Քառյան | Ռաֆիկ | 1500 | 12000 |
| | Ընդամենը | | | 289520 |

Առաջատար մասնագետ՝ Ա. Ամիրաղյան

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

առ22.11.2013թ ՀՀ Տավուշի մարզի Այրում համայնքի ֆիզիկական անձանց գույքահարկի վերաբերյալ

/դր/

| հ/հ | Գույքահարկ | Ընթացիկ 2013թ հարկը |
|---|---|---|
| 1 | Փոխադրամիջոցներ | 2913975 |
| 2 | Շենքեր և շինություններ | 147121 |
| Ընդամենը | | |

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

առ22.11.2013թ ՀՀ Տավուշի մարզի Այրում համայնքի ֆիզիկական անձանց հողի հարկ վերաբերյալ

/դր/

| | |
|---|---|
| Ընթացիկ 2013թ հողի հարկ | 338104 |

Այրումի քաղաքապետ՝ Գ. Եգանյան

կատ.՝ Ն.Ղանիեյան

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

առ22.11.2013թ ՀՀ Տավուշի մարզի Այրում համայնքի ֆիզիկական անձանց գույքահարկի վերաբերյալ

/դր/

| հ/հ | Գույքահարկ | Ընթացիկ 2013թ հարկը |
|---|---|---|
| 1 | Փոխադրամիջոցներ | 2913975 |
| 2 | Շենքեր և շինություններ | 147121 |
| Ընդամենը | | |

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

առ22.11.2013թ ՀՀ Տավուշի մարզի Այրում համայնքի ֆիզիկական անձանց հողի հարկ վերաբերյալ

/դր/

| | |
|---|---|
| Ընթացիկ 2013թ հողի հարկ | 338104 |

Այրումի քաղաքապետ՝ Գ. Եզանյան

կատ.՝ Ն.Դանիելյան

# Տեղական տուրքեր

## Ծխախոտի և ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար նախատեսվող մուտքեր

դրամ

| հ/հ | Կազմակերպության անվանումը | գումար |
|---|---|---|
| 1 | Ա/Ձ Վարդանյան Արթուր | 30000 |
| 2 | Ա/Ձ Տիրացյան Բագրատ | 15000 |
| 3 | Ա/Ձ Մուքելյան Ռուշան | 30000 |
| 4 | Ա/Ձ Մելքոնյան Արարատ | 30000 |
| 5 | Ա/Ձ Այվազյան Արթուր | 30000 |
| 6 | Ա/Ձ Սարգսյան Կարինե | 30000 |
| 7 | Ա/Ձ Սիմոնյան Իրինա | 15000 |
| | **Ընդամենը** | **180000** |

## Տեղական տուրքերից նախատեսվող այլ մուտքեր

դրամ

| | | |
|---|---|---|
| 1 | Շինարարության թույլտվություն | 36000 |
| 2 | Քանդման թույլտվություն | 5000 |
| 3 | Բենզինի մանրածախ վաճառքի թույլտվություն | 150000 |
| 4 | Տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն | 30000 |
| 5 | Հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության | 24000 |
| 6 | Ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության | 2000 |
| 7 | Մինչև 20 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող ոչ հիմնական շինությունների տեղադրման համար | 3000 |
| 8 | 20 և ավելի քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող ոչ հիմնական շինությունների տեղադրման համար | 5000 |
| | **Ընդամենը** | 255000 |

Կատարող՝
Առաջատար մասնագետ
Ա. Ամիրաղյան

# ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է այն մասին, որ Այրումի քաղաքապետարանի կողմից բնակիչներին վարձակալությամբ տրամադրված համայնքային սեփականության հողերի համար գանձվում է 1416.8 հազ. դրամ վարձավճար, *այդ թվում*՝

| *Հողի տեսակը* | *Գումարը տարվա կտրվածքով /հազ. դրամ/* |
| --- | --- |
| Գյուղ. նշանակության հողերի վարձավճար | 610.995 |
| Ավտոտնակների զբաղեցրած հողամասեր | 516.305 |
| Հասարակական և խառը կառուցապատման հողամասերի վարձավճարներ | 289.520 |
| Ընդամենը | 1416.820 |

Կատարող՝

առաջատար մասնագետ

Ա. Ամիրաղյան

22.11.2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

Այրում համայնքի ավագանի

# ՈՐՈՇՈՒՄ

*22 նոյեմբերի 2013 թիվ 31– Ն*

## 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 –րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով համայնքի ավագանին *որոշում է.*

1. 2014թ. ուսումնական տարվա համար «Այրում երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում սովորելու համար ուսման վարձը մեկ աշակերտի համար սահմանել՝
   1) դաշնամուրի բաժնում՝ տարեկան 22500 դրամի չափով, մեկ ամսում՝ 2500 դրամի չափով,
   2) ազգային նվագարանների բաժնում՝ տարեկան 18000 դրամ, մեկ ամսում՝ 2000 դրամի չափով,
   3) 2014թ. համար «Այրում քաղաքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից գանձվող երեխաների մանկապարտեզ հաճախելու դիմաց վարձի չափը սահմանել ամսական 4000 դրամի չափով:
2. Ուժը կորցրած ճանաչել Այրում համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 8-ի «2013 թվականին Այրում համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 24-Ն որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Ավագանու անդամներ

կողմ- 7 դեմ-0 ձեռնպահ-0

Հ. ԱՂԱԲԱԲՅԱՆ
Ա. ԱՍՏԻԿՅԱՆ
Մ. ԲԱՀԱԴՈՒՐՅԱՆ
Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ա. ՅԱՐԱԼՅԱՆ
Հ.ՍԻՐԱԴԵՂՅԱՆ
Մ.ՄԻՐԶՈՅԱՆ

Այրումի քաղաքապետ Գ. Եգանյան

2013թ. նոյեմբերի 22
ք. Այրում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

Այրում համայնքի ավագանի

# ՈՐՈՇՈՒՄ

*22 նոյեմբերի 2013թ. թիվ 32-Ա*

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետի, համաձայն՝ համայնքի ավագանին *ո ր ո շ ու մ է.*

1. Հաստատել համայնքի ղեկավարի վարձատրության չափը՝ 2014 թվականին Այրումի քաղաքապետի աշխատավարձը սահմանել ամսական 198950 դրամ:
2. Ուժը կորցրած ճանաչել Այրում համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 30-ի «Համայնքի ղեկավարի վարձատրության չափի մասին» թիվ 27-Ա որոշումը:

Ավագանու անդամներ

կողմ- 7 դեմ-0 ձեռնպահ-0

Հ. ԱՂԱԲԱԲՅԱՆ
Ա. ԱՍՏԻԿՅԱՆ
Մ. ԲԱՀԱԴՈՒՐՅԱՆ
Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ա. ՅԱՐԱԼՅԱՆ
Հ.ՍԻՐԱԴԵՂՅԱՆ
Մ.ՄԻՐԶՈՅԱՆ

Այրումի քաղաքապետ Գ. Եգանյան

2013թ. նոյեմբերի 22
ք. Այրում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

Այրում համայնքի ավագանի

# ՈՐՈՇՈՒՄ

*22 նոյեմբերի 2013թ. թիվ 33 - Ա*

2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՅՐՈՒՄԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել Այրումի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելված 1-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել Այրում համայնքի ավագանու 2012թ. նոյեմբերի 8-ի «2013 թվականի Այրումի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին » թիվ 20-Ա որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ

կողմ- 7 դեմ-0 ձեռնպահ-0

Հ. ԱՂԱԲԱԲՅԱՆ
Ա. ԱՍՏԻԿՅԱՆ
Մ. ԲԱՀԱԴՈՒՐՅԱՆ
Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ա. ՅԱՐԱԼՅԱՆ
Հ.ՍԻՐԱԴԵՂՅԱՆ
Մ.ՄԻՐԶՈՅԱՆ

Այրումի քաղաքապետ՝ [signature] Գ. Եգանյան
2013թ. նոյեմբերի 22
ք. Այրում

Հավելված 1

Հաստատվել է

__Այրում___ համայնքի ավագանու

2013 թ. թիվ _10_ նիստի թիվ 33-Ա որոշմամբ

# ԱՅՐՈՒՄԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ _13_

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը | Դրույքաչափ (դրամ) | Դրույքների թիվը | Ամսական գումարը (դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | Քաղաքապետ | 198950 | 1.00 | 198950 |
| | Հայեցողական պաշտոններ | | | |
| 2 | Քաղաքապետի տեղակալ | 121000 | 1.00 | 121000 |
| 3 | Խորհրդական | 110000 | 1.00 | 110000 |
| | Համայնքային ծառայողներ | | | |
| 4 | ՀՀ Տավուշի մարզի Այրումի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար (ծած.՝ 1.2 - 1) | 121000 | 1.00 | 121000 |
| | Ներքին աուդիտի բաժին | | | |
| 5 | Բաժնի պետ (ծած.՝ 2.1 - 2) | 117000 | 1.00 | 117000 |
| | Աշխատակազմ | | | |
| 6 | ՀՀ Տավուշի մարզի Այրումի քաղաքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ (ծած.՝ 2.3 - 1) | 115000 | 1.00 | 115000 |
| 7 | ՀՀ Տավուշի մարզի Այրումի քաղաքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծած.՝ 3.1 - 1) | 110000 | 1.00 | 110000 |
| 8 | ՀՀ Տավուշի մարզի Այրումի քաղաքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծած.՝ 3.1 - 2) | 110000 | 1.00 | 110000 |
| | Քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատողներ | | | |
| 9 | Հավաքարար | 59524 | 1.00 | 59524 |
| | Տեխսպասարկման անձնակազմ | | | |
| 10 | Հավաքարար | 59524 | 1.00 | 59524 |
| 11 | Վարորդ | 59524 | 1.00 | 59524 |
| 12 | Պարեկ | 59524 | 1.00 | 59524 |
| 13 | Բանվոր | 59524 | 1.00 | 59524 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 1300570 | 13.00 | 1300570 |

Աշխատակազմի քարտուղար ____________ ____________

Ստորագրություն Անուն ազգանուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

Այրում համայնքի ավագանի

# ՈՐՈՇՈՒՄ

*22 նոյեմբերի 2013թ. թիվ 34-Ա*

2014 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՅՐՈՒՄԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի համաձայն՝ Այրում համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել «Այրումի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել «Այրումի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Հաստատել «Այրումի երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 3-ի:

4.Ուժը կորցրած ճանաչել Այրում համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 8-ի «2013 թվականին Այրումի քաղաքապետարանի համայնքային հիմնարկների ու կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 21-Ա որոշումը:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ

կողմ- 7 դեմ-0 ձեռնպահ-0

Հ. ԱՂԱԲԱԲՅԱՆ
Ա. ԱՍՏԻԿՅԱՆ
Մ. ԲԱՀԱՂՈՒՐՅԱՆ
Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ա. ՅԱՐԱԼՅԱՆ
Հ.ՍԻՐԱՂԵՂՅԱՆ
Մ.ՄԻՐԶՈՅԱՆ

Այրումի քաղաքապետ Գ. Եգանյան

2013թ. նոյեմբերի 22
Այրում

Հավելված 1

Հաստատվել է
__Այրում___ համայնքի ավագանու
2013 թ. թիվ _10_ նիստի թիվ 34-Ա որոշմամբ

# «ԱՅՐՈՒՄԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ _15_

2. «ԱՅՐՈՒՄԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը ( դրամ ) | ___% հավելավճար | Ամսական աշխատավարձ ( դրամ ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1.00 | 68000 | | 68000 |
| 2 | Հաշվապահ | 0.70 | 67143 | | 47000.1 |
| 3 | Դաստիարակ | 0.84 | 66071 | | 55500 |
| 4 | Դաստիարակ | 0.84 | 66071 | | 55500 |
| 5 | Դաստիարակ | 0.84 | 66071 | | 55500 |
| 6 | Դաստիարակ | 0.56 | 66071 | | 37000 |
| 7 | Երաժշտական դաստիարակ | 0.70 | 66071 | | 46250 |
| 8 | Բուժքույր | 0.75 | 59524 | | 44643 |
| 9 | Դաստիարակի օգնական | 1.00 | 59524 | | 59524 |
| 10 | Դաստիարակի օգնական | 1.00 | 59524 | | 59524 |
| 11 | Դաստիարակի օգնական | 1.00 | 59524 | | 59524 |
| 12 | Խոհարար | 1.00 | 59524 | | 59524 |
| 13 | Խոհարարի օգնական | 0.50 | 59524 | | 29762 |
| 14 | Լվ.- հավաքարար | 1.00 | 59524 | | 59524 |
| 15 | Օժանդակ բանվոր | 0.50 | 59524 | | 29762 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 12.23 | 941690 | | 766535 |

Աշխատակազմի ղեկավար

Ստորագրություն Անուն ազգանուն

Հավելված 2

Հաստատվել է
__Այրում___ համայնքի ավագանու
2013 թ. թիվ _10_ նիստի թիվ 34-Ա որոշմամբ

# «ԱՅՐՈՒՄԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ » ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ _7_

2. «ԱՅՐՈՒՄԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀՈԱԿ-Ի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը ( դրամ ) | ___% հավելավճար (դրամ) | Ամսական աշխատավարձ ( դրամ ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1.00 | 64814 | | 64814 |
| 2 | Հաշվապահ | 0.60 | 59524 | | 35714.4 |
| 3 | Գրադարանի վարիչ | 1.00 | 59524 | | 59524 |
| 4 | Մարզական մեթոդիստ | 1.00 | 59524 | | 59524 |
| 5 | Գեղ. մասի ղեկավար | 1.00 | 59524 | | 59524 |
| 6 | Տնտեսվար | 1.00 | 59524 | | 59524 |
| 7 | Հավաքարար | 1.00 | 59524 | | 59524 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 6.60 | 421958 | | 398148.4 |

Աշխատակազմի ղեկավար ____________ ____________
ստորագրություն Անուն ազգանուն

Հավելված 3

Հաստատվել է
__Այրում___ համայնքի ավագանու
2013 թ. թիվ _10_ նիստի թիվ 34-Ա որոշմամբ

# «ԱՅՐՈՒՄԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ _9_

2. «ԱՅՐՈՒՄԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ » ՀՈԱԿ-ի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը ( դրամ ) | ___% հավելավճար (դրամ) | Ամսական աշխատավարձ ( դրամ ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1.00 | 60200 | | 60200 |
| 2 | Հաշվապահ | 0.30 | 60000 | | 18000 |
| 3 | Ժող. Գործիքների ուսուցիչ | 1.50 | 59524 | | 89286 |
| 4 | Ժող. Գործիքների ուսուցիչ | 1.00 | 59524 | | 59524 |
| 5 | Դաշնամուրի ուսուցիչ | 1.50 | 59524 | | 89286 |
| 6 | Դաշնամուրի ուսուցիչ | 1.50 | 59524 | | 89286 |
| 7 | Դաշնամուրի ուսուցիչ | 1.00 | 59524 | | 59524 |
| 8 | Կոնցերտմայստեր | 1.00 | 59524 | | 59524 |
| 9 | Հավաքարար | 1.00 | 59524 | | 59524 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 9.80 | 536868 | | 584154 |

Աշխատակազմի ղեկավար

Ստորագրություն Անուն ազգանուն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

### Այրում համայնքի ավագանի

# ՈՐՈՇՈՒՄ

*13 դեկտեմբերի 2013թ. թիվ 35-Ա*

ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 32-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի համաձայն Այրում համայնքի ավագանին *որոշում է.*

1. Այրում համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 22-ի « Համայնքի ղեկավարի վարձատրության չափի մասին» թիվ 32-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
    1) որոշման 1-ին կետում գրված «ամսական» բառից հետո գրված «198950» թիվը փոխարինել «218850» թվով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ

կողմ- 7 դեմ-0 ձեռնպահ-0

Հ. ԱՂԱԲԱԲՅԱՆ
Ա. ԱՍՏԻԿՅԱՆ
Մ. ԲԱՀԱԴՈՒՐՅԱՆ
Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ա. ՅԱՐԱԼՅԱՆ
Հ.ՍԻՐԱԴԵՂՅԱՆ
Մ.ՄԻՐԶՈՅԱՆ

Այրումի քաղաքապետ Գ. Եգանյան

2013թ. ...
ք. Այրում

# Համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձը

Հարգելի Այրումցիներ.

Անցավ ևս մեկ տարի, և անհարժեշտություն է առաջանում ամփոփել արդյունքները՝ նշել հաջողություններն ու պարզել անհաջողությունների պատճառը:

Մասնակի ամփոփելով 2013 թվականը՝ տեսնում ենք, որ նախատեսված նպատակների մի մասը իրականացվել է: Կյանքի են կոչվում զարգացման ծրագրերը: 2013 թվականին համայնքում կատարվել են կարևոր ձեռքբերումներ՝

- Այրումի եկեղեցու շրջակայքի ցանկապատման աշխատանքներ,
- Եկեղեցու դարպասի տեղադրում,
- Քաղաքապետարանի կարիքների համար ձեռք է բերվել համակարգիչ, հեռուստացույց, գրասեղաններ և աթոռներ:

Այրումի մանկապարտեզում այժմ գործում են եվրոպական ստանդարտներին համապատասխան սանհանգույցներ:

Անհրաժեշտ է նշել նաև, որ որոշակի ծրագրեր ֆինանսական միջոցների սղության պատճառով հնարավոր չեղավ իրականացնել:

2014 թվականին համայնքի համար կարևորագույն խնդիր եմ համարում համայնքային կենտրոնի շինարարությունը և համայնքի երկու գլխավոր փողոցների՝ Աբովյան և Թումանյան, ասֆալտապատման աշխատանքները:

Համայնքի բյուջեն հանդիսանում է տվյալ տարվա կարևորագույն ֆինանսական փաստաթուղթը, որն արտացոլում է համայնքի առաջընթացն ու հաջողությունները նախորդ տարիների համեմատ: Առաջարկվող բյուջեն իր հիմքում պարունակում է համայնքի ֆինանսական կառավարման թափանցիկության, ծախսերի արդյունավետության և նպատակայնության բարձրացման սկզբունքներ:

2014 թվականին սեփական եկամուտների աճից գոյացած միջոցները կուղղվեն համայնքային ենթակայության կառույցների բարելավմանը:

Համայնքի բարօրության, հզորացման համընդհանուր նպատակով անհրաժեշտ է ինչպես տեղական ինքնակառավարման մարմնի, այնպես էլ յուրաքանչյուր բնակչի իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության ստանձման կարողությունը:

Համոզված եմ, որ ձեր բոլորի աջակցությամբ հաջորդ բյուջետային տարում հաջողությամբ կլուծենք բազմաթիվ համայնքային խնդիրներ:

Ցանկանում եմ, որ 2014 թվականին իրականություն դառնա Այրում քաղաքի բնակիչների բոլոր այն ցանկություններն ու իղձերը, որոնք չիրականացան 2013 թվականին:

Շնորհավորում եմ Այրում քաղաքի բնակիչներին Ամանորի և Սուրբ Ծննդի կապակցությամբ: Թող 2014 թվականը լինի բարի տարի:

# ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Ժողովրդի կողմից ընտրված համայնքի ղեկավարը առաջին հերթին պետք է ի վիճակի լինի պաշտպանել իր ժողովրդի շահերն ու ազատությունը:

Զարգացման համար Այրումն իր աշխարհագրական դիրքով ու բնակլիմայական պայմաններով գտնվում է բարենպաստ ու հարմար տեղում, որը պետք է նպատակամղել յուրաքանչյուր այրումցու կարողությունը զարգացնելու գործին:

Ժամանակն է, որ համայքն ունենա համայնքային և կենցաղային ծառայությունների հզոր գրասենյակ: Ջրամատակարարումը, աղբահանությունը, գազամատակարարումը, էլեկտրականությունը, կոյուղին և նման բոլոր ծառայությունները պետք է գործեն բնակչության իրավունքներին ու պարտականություններին համարժեք: Այսօր բացակայում է ներդաշնակ աշխատանքը նշված բնագավառներում:

Համայնքապետարանի ռազմավարական նպատակն է ապահովել Այրում համայնքի բնականոն զարգացումը, բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավումը, աշխատատեղերի ստեղծումը, բնակչության բարոյահոգեբանական մակարդակի աճը և լինել նրա իրավունքների պաշտպանը:

Հանրապետության հյուսիսից Հայաստան մտնող ճանապարհին, որպես առաջին քաղաքատիպ բնակատեղի, ճանապարհորդին ներկայանում է Այրում բնակավայրը: Այս բնակավայրը պետք է բավարարի ճանապարհորդի կենսական պահանջմունքները և տա պատկերացում Հայաստան պետության մասին: Այս առումով Այրում քաղաքի զարգացումը հրատապ է: Այրումը պարտադրված է լինել տարածաշրջանի թե մշակութային, թե արտադրական կենտրոն:

1995 թվականից մենք ականատես ենք լինում, որ Այրումը զարգանում է: Այն է. ստեղծվել է մաքսակետ, սահմանապահ ուղեկալ, բեռների տերմինալ, նոր արտադրություններ և այլն:

Քաղաքի կայացման հարցում առաջին հերթին իր մեծ դերը պետք է ցույց տա պետությունը: Իսկ առաջիկա տարում համայնքի հիմնական խնդիրներն են Այրում համայնքի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրի դրույթները, որին պետք է նպատակամղել և պետական բյուջեի և տարբեր ծրագրերի և համայնքի բյուջեի հնարավոր միջոցները:

Հետևաբար համայնքապետարանի ռազմավարությունը պետք է լինի փոքր արտադրությունների հիմնումը:

# Ա. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԿԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Այրում համայնքի2010-2012թթ. բյուջեր մուտքերի ամփոփ և 2013թ. կանխատեսում

հազ. դրամ

| N | Եկամուտների տեսակները | 2011թ. փաստացի | 2012թ. փաստացի | 2013թ. նախատես. | 01.12.2013 թ. դրությամբ փաստացի | 2014թ. նախատես. |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Հարկային եկամուտներ և տուրքեր | 4007.7 | 3442.5 | 3991.2 | 3001.1 | 4447.6 |
| 1.1 | Հողի հարկ | 578.8 | 474.5 | 442.3 | 362.020 | 445.3 |
| 1.2 | Գույքահարկ` որից | 3078.7 | 2539.0 | 3093.9 | 2375.09 | 3567.3 |
| 1.2.1 | *շենքերի և շինությունների* | *1313.9* | *626.4* | *640.8* | *168.610* | *642.1* |
| 1.2.2 | *փոխադրամիջոցների* | *1764.8* | *1912.6* | *2453.1* | *2206.480* | *2925.2* |
| 1.3 | Տեղական տուրք | 350.2 | 429.0 | 455.0 | 263.990 | 435.0 |
| 2. | Ոչ հարկային եկամուտներ | 1524.5 | 1621.0 | 1782.7 | 1171.75 | |
| 2.1 | Հողի վարձավճար | 1084.5 | 1078.0 | 1462.7 | 960.260 | 1416.8 |
| 2.2 | Գույքի վարձավճար | 101.3 | 200.0 | 200.4 | 111.790 | 171.5 |
| 2.3 | Այլ ոչ հարկային եկամուտ | 338.7 | 343.0 | 119.6 | 99.7 | 119.6 |
| 2.3.1 | *որից`պատվիր. լիազոր.* | *300.0* | - | - | - | - |
| 3. | Պաշտոնական դրամաշնորհ | 31191.5 | 32321.2 | 35010.3 | 33133.0 | 36491.6 |
| 3.1 | Ընթացիկ դրամաշնորհ | 29999.2 | 31128.9 | 33818.0 | 31010.3 | 36491.6 |
| 3.2 | Սուբվենցիա | 1192.3 | 1192.3 | 1192.3 | 2122.7 | - |
| | **Ընդամենը եկամուտներ** | **36723.7** | **37384.7** | **40784.1** | **37305.8** | **42647.1** |
| 4. | Ազատ մնացորդ | 11727.0 | 9325.7 | 9241.4 | 9689.6 | 8706.6 |
| | **Ընդամենը** | **48450.7** | **46710.4** | **48833.3** | **46995.5** | **51353.7** |
| 5. | Գույքի օտարում | 650.9 | 2000.0 | 2000.0 | 743.11 | 2000.0 |

## Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը ըստ ոլորտների

### Պատմական ակնարկ, աշխարհագրական դիրքը

ՀՀ Տավուշի մարզի Այրում քաղաքը հիմնվել է 1937թ.-ին, պտղի վերամշակության փոքրիկ արտադրության հիմնման, կառուցապատվել է Այրումի պահածոների գործարանի բազայի վրա, նրա հզորացմանը զուգընթաց: 1960 թվականից եղել է քաղաքատիպ ավան: Համարվում է տարածքի արդյունաբերական և մշակութային կենտրոն:

Գտնվում է ՀՀ հյուսիս-արևելյան շրջանում, Դեբեդ գետի ափին, Հայաստան-Վրաստան միջպետական մայրուղիների խաչմերուկում: Սահմանակից է Լոռու մարզին, գտնվում է ծովի մակարդակից 502 մ բարձրության վրա: Մարզկենտրոնից գտնվում է 70 կմ և Երևան քաղաքից 190 կմ հեռավորության վրա: Կլիման տաք է՝ ամռանը շոգ, առավելագույն ջերմաստիճանը հասնում է մինչև +35 աստիճան, ձմեռը մեղմ է, կարճատև, 3 ամիս տևողությամբ, մինչև -5 աստիճան ցուրտ:

### Ժողովրդագրություն

Համայնքի բնակչությունը կազմում է 2792 մարդ, որից.

- տղամարդ 49 % -ը
- թոշակառուներ 400
- միակողմանի ծնողազուրկ երեխաներ 25
- երկկողմանի ծնողազուրկ երեխաներ 1
- հայրենական պատերազմի վետերաններ, մասնակիցներ, աշխատանքի վետերաններ 2
- հաշմանդամներ 48
- նպաստառուներ 80 ընտանիք
- զոհվածների ընտանիքներ 4
- փախստականներ 150

Աշխատունակ բնակչության թիվը կազմում է 1100 մարդ, որոնցից զբաղվածների թիվը 345 մարդ: Հիմնական աշխատանք չունի աշխատունակ բնակչության մոտ 31 %-ը:

### Համայնքի հիմնական ուժեղ կողմերը և հնարավորությունները

- Այրում համայնքը գտնվում է միջպետական մայրուղու վրա, Վրաստանի հարևանությամբ:
- Համայնքում է գտնվում Այրում երկաթուղային կայարանը, որը Հայաստանը արտաքին աշխարհի հետ կապող միակ երկաթուղային կայարանն է:
- Համայնքը գտնվում է հարմար աշխարհագրական դիրքում և ունի բարենպաստ կլիմայական պայմաններ: Արևային օրերը տարվա մեջ կազմում են 306 օր: Այրումի տարածքով է հոսում Դեբեդ գետը,
- Այրում համայնքում է գտնվում տարածաշրջանի միակ պտուղ վերամշակող ձեռնարկությունը՝ Այրումի պահածոների գործարանը:
- Համայնքը ապահովված է կոմունալ-կենցաղային և արտադրության կազմակերպման

անհրաժեշտ պայմաններով (գազաֆիկացված է, ունի ջրմուղ-կոյուղու ներքին համակարգ, խորքային ջրի պոմպակայան, ապահովված է հեռախոսակապով, ունի հեռուստակայան, արտադրական տարածքներ):

- Համայնքում առկա է աշխատանքային մեծ ներուժ, արտադրական նշանակության շինություններ և այլ տարածքներ:
- Կան բազմաթիվ երիտասարդ ընտանիքներ, ուսանողներ, նորավարտ մասնագետներ:
- Զարգացման փուլում գտնվող առևտրի և սպասարկման մանր օբյեկտներ:
- Համայնքում կա անավարտ երկու բազմաբնակարան շենք:
- Համարվում է տարածաշրջանի մշակութային կենտրոն:
- Ունի քաղաքատիպ կառուցապատում և կենցաղ:

## Համայնքի թույլ կողմերը

- Երիտասարդ բնակչության արտագաղթ և կենսաթոշակառուների թվի տոկոսային աճ:
- Համայնքը չունի գյուղատնտեսական նշանակության հողեր:
- Համայնքը չունի հեռանկարային զարգացման հողեր:
- Արտագնա աշխատողների թվի աճ:
- Ենթակառուցվածքների պահպանման հնարավորության բացակայություն:

## Համայնքի հիմնական վտանգ սպառնացող փոփոխությունները

- Բնակչության կազմը վերջին 20 տարիներին ծերանում է:
- Բնակավայրից արտագաղթել է 700 մարդ:
- Պակասել է ծնելիությունը 22%-ով:
- Բնակչության գերակշռող մասը սոցիալապես անապահով և անվճարունակ են:
- Բազմաբնակարան շենքերը վթարային են և փլման վտանգի տակ են գտնվում:
- Երիտասարդությունը իր ծննդավայրից լուրջ ակնկալիքներ չունի:

